



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

«19» 07 2021թ.

№ 08/ԼԱ/ - 535

**Հուլիսի 12-18-ին դիտված օդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

2021 թվականի հուլիսի 12-13-ին, 16-ին, 18-ին՝ առանձին շրջաններում, 14-15-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ, 17-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է. Ֆանտանում՝ 47մմ, Երևան-Աէրոլոգիական կայանում՝ 40մմ, Հրազդանում՝ 36,1մմ, Ուրցաձորում՝ 28,8մմ, Ճամբարակում՝ 25,6մմ, Պուշկինի լճում՝ 25,3մմ, Գավառում և Արտաշատում՝ 24մմ, Դիլիջանում՝ 23,4մմ, Բագրատաշենում և Անանուն լճում՝ 23մմ, մնացած շրջաններում՝ 22մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հուլիսի 12-13-ին, 18-ին՝ նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով, 14-ին, 16-ին նորմայից ցածր է եղել 1-2, 15-ին՝ 3-5 աստիճանով, 17-ին եղել է նորմայի սահմաններում:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արմավիրում՝ +37°C, Արարատում՝ +36...+37°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +35...+38°C, նախալեռնային շրջաններում՝ +28...+29°C, Վայոց Ձորի նախալեռնային շրջաններում՝ +37°C, լեռնային շրջաններում՝ +28°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +31...+35°C, լեռնային շրջաններում՝ +26...+28°C, Տավուշում՝ +32...+35°C, Շիրակում՝ +27...+32°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +29...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +34°C, Լոռիում՝ +28...+32°C, Գեղարքունիքում՝ +24...+28°C, Երևան քաղաքում՝ +36...+37°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +13...+16°C, Շիրակում՝ +11...+12°C (Աշոցքում՝ +6°C), Լոռիում՝ +10...+14°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +8°C, նախալեռնային շրջաններում՝ +17°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +15°C, Գեղարքունիքում՝ +7...+12°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +17...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+13°C, Արմավիրում՝ +16°C, Տավուշում՝ +12...+17°C (Դիլիջանում՝ +11°C), Արարատում՝ +14...+17°C, Երևան քաղաքում՝ +16...+18°C:

Հուլիսի 13-ին Իջևանում դիտվել է ուժեղ քամի 9մ/վրկ, պողոթյունների ժամանակ մինչև 27մ/վրկ արագությամբ, շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում՝ 8-20մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ մինչև 16-22մ/վրկ արագությամբ:

Հուլիսի 14-ին՝ Երևան-Ալերոլոգիական կայանում և Ֆանտանում դիտվել է ուժեղ անձրև՝ համապատասխանաբար 33մմ և 30մմ քանակությամբ: Շաբաթվա ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական դաշտային աշխատանքները և բերքահավաքը: Դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները:

Լեռնային շրջաններում շարունակվել է հնդավորների ձևավորումը, տեղ-տեղ սկսվել է բալի հասունացումը, կաղամբի գլխի ձևավորումը և տեխնիկական հասունացումը, ինչպես նաև բանջարանոցայինների երրորդ տերևը:

Նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենի և պտուղների հասունացումը շարունակվել է, կատարվել է բերքահավաք:

Արարատյան դաշտում սկսվել է լոլիկի, վարունգի, սմբուկի, տաքդեղի ձևավորումը և կանաչ հասունացում, Մերձավանում լոլիկը կարմրել է:

Հովտային շրջանների պտղատու այգիներում, խաղողի, ծխախոտի և առվույտի դաշտերում կատարվել է հերթական վեգետացիոն և սնուցող ոռոգում:

Հուլիսի 12-13-ին հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել: Հուլիսի 14-16-ին առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, իսկ հուլիսի 17-18-ին՝ նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1 սմ-ով (11.07-18.07.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.75մ (18.07.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 4 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի պարտականությունները կատարող



Վ.Գրիգորյան